

նուսը ճՁ թուին, նոր գլուխ է սկսում. «Յայտարարի ժամանակս Ստեփանոս Սրենեցի» են. խօսքերով. նոյնը նկատում ենք Մխիթարի մէջ. սկսելով «յամի թուականութեան հայոց հարիւրերորդի ութսուներորդի», թում է վերոյիշեալ գէպքերի հետ և մի քանի ուրիշը, և աւելացնում. «Յայնմ ժամանակի յայտնեցաւ սրն. Ստեփանոս» . . . : Մտածողութեան նոյն եղանակը և բնորոշումը ժամանակի երկուսի մէջ, որով և պարզ նրանց ծանօթութիւնը, որ հաստատուում է նաև Մխիթարի տուած տեղեկութեամբ իւր ժամանակագրութեան մէջ<sup>(1)</sup>:

6. Պարզելով Մխիթարի և Օրբէլեանի յարաբերութիւնը, կողմնակի կերպով շօշափած եղանք մասամբ նաև նորա գրական-պատմական արժէքը, որպէս ազրիւր Օրբէլեանի: Բայց աւելի մեծ է նորա նշուածութիւնը:

ա) Նա է աւանդում Գոգիկ Այրիվանեցու վկայարանութիւնը, որ մի տարբեր գրութիւն էր, քան «սկզբնական» ազրիւրը: Այլշան Գոգիկին համարում է ժամանակակից Գանիէլ երգչի, որին յիշում է մագիստրոսը իւր թղթերի մէջ. «գուցէ, այս ժամանակներս ազրած ըլլայ ուրիշ ճարտար երգիչ մ'ալ, Գոգիկ Այրիվանեցի, հեղինակ մեծեղի ըսուած երգոց»<sup>(2)</sup>: Երեւում է Այլշան մի ուրիշ ազրիւրից գրիւ է Գոգիկի մասին և ոչ Մխիթարից:

բ) Նախարարական բարձրի և մանաւանդ եպիսկոպոսական գահնամակի մասին տալիս է աւելի տեղեկութիւն, քան գրիւէինք Օրբէլեանից<sup>(3)</sup>. Նա տալիս է եպիսկոպոսական երեսուն և վեց աթոռների դասաւորութիւնը աջից և ձախից, յակնէ յանուանէ, օգտուելով Սամուէլ Կամբջանձորեցուց, որ կորած է, և հակառակ Ուխտանեսի, որ միայն երեսուն եպիսկոպոսութիւն է հաշուում, դասաւորութեան մէջ էլ տարբեր<sup>(4)</sup>: Նախարարական գահնամակի համար օգտուում է Դեռնդից, որ տարարազարար այդ մասում կորած է, տալով չորս գահերեց իշխանների և նրանց

չրջանի իշխանական բարձրի ու զօրքերի միահամուռ թիւը, համաձայն գահնամակի պատկերաւոր ձևակերպութեան, որ հրատարակել է Շահխաթունեան Անանիա Շիրակունու անունով և նորանից էլ Այլշան<sup>(5)</sup>:

գ) Տեղեկութիւն է տալիս Թոնդրակեցուց ծագման և Ծագ ազգի բաժանման մասին, վերջինն առնելով Ուխտանեսից, որ այդ մասով կորած է: Թոնդրակեցուց ծագումը Մխիթար զնում է Գաւիթ Կակազեցու ժամանակ, հիմնադրին համարելով Սրենեցու հակառակորդ Սմբատ Բագրատունու համանուն թոռը, Հայոց ՄՀ (= 270) թուին, մինչդեռ Ասողիկ և Մագիստրոս նշանակում են Յովհաննէս Իրասխանակերացու և Սմբատ Ա-ի ժամանակ<sup>(6)</sup>:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐԲԵՊ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ ՇԱՐՈՆԱԿԻՅ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՂՈՒԻ ՀԻՆ ԱԶԳԱԿՑՆԵՐԸ

Հայ բանասիրութեամբ և պատմութեամբ զբաղողներու ծանօթ է, թէ Հայերը՝ լեզուաբանական տեսակէտով՝ Հնդեւրոպական կոչուած լեզուներու մեծ ընտանիքին արեւմտեան ճիւղին կը պատկանին:

Լեզուաբան Ա. Մէյէի կարծիքով՝ տարակոյս չկայ, թէ հայերէնը հնդեւրոպական լեզու մըն է, և կը խօսուի ժողովուրդէ մը որուն նախնական լեզուն էր հարաւային կալկասեանը<sup>(\*)</sup>:

Հիմա հրապարակի վրայ Հոմերոսէ յիշուած Ախիլեիցներու խնդրին ալ կայ, խընդիր մը որ շատ կը հետաքրքրէ մեզ՝ Հայերս Ինչպէս ընդունած են գրիւնականք, Հայերը ժամանակ մը բնակած են Թեսաղիա, Փոլեզիացիներու հետ կողք կողքի, և միտսն գաղթած են Ասիա, խօսելով նոյն լեզուին մօտ բան մը, իբրև քոյր լեզու:

(\*) Այրարատ. եր. 424:

(\*) Ասողիկ. Բ. երրորդ գլ. հրատ. Շահագարեանցի Գրիգոր Մագիստրոս, հրատ. կոստանեանցի. եր. 153:

(\*) A. MEILLET, Ի Թերթին, Revue des Études Arméniennes, 1927, էջ 312:

(1) Հրատ. Էմինի. եր. 23:

(2) Ենորհացի և Պարզայր. եր. 90:

(3) Համ. Օրբ. եր. 24-25:

(4) Ուխտ. հատ. Բ. եր. 57:

Արդ, Տրոյադայի հերոսներէն Ագամեմոնն ու եղբայրը՝ Մենելաոս, Աքայեցիները էին, բայց ծնած են փոխզիտայի հօրմէ:

Աքայեցիք տարածուած էին Թեսաղիայէ մինչև Կիլիկիա, ուր հիմնած են իրենց մայրաքաղաքներէն մին, ընդարձակ մատենադարանով մը, լի հնդեւրոպական փեսացի լեզուով ու սեպածեւ տառերով գրուած բազմաթիւ պնակիտներով:

Պատմաբան Ռ. Վէյլ(\*) կը պնդէ, թէ Սեւ ծովի հիւսիսային եզերքը շրջան ընելով Բալկանեան թերակղզին դադթող Հնդեւրոպականներու արեւմտեան արշաւախումբը՝ Իլլիրիայէ, Եպիրոսէ ու Թեսաղիայէ անցնելով ձնուռնոց տուած է Հելլէններու. իսկ նոյն դադութին արեւելեան արշաւախումբը նախ կանգ առած է Թրակիա, եւ՝ ժամանակ մը ետք՝ Եգէական ծովին հիւսիսային կողմէն Ասիա անցնելով հաստատուած է փոխզիտական երկրամասին մէջ: Արեւմտեան արշաւախումբը կազմողները կը կոչուին «Աքայեցիք», իսկ Թրակիափոխզիտայիք՝ ինչպէս կը տեսնուի, մօտիկ ազգական են եւրոպական ծովեզերքի Հելլէններուն: Այս ազգականութիւնը կը հաստատուի նաև երկու արշաւախումբերու լեզուաց ազգակցութեամբ: Արդ, Ռ. Վէյլ աւելի հետուն մղելով ազգակցական այս կապը, պատմաբան Ե. Մէյէրի հետ կ'ընդունի, թէ հայերէն լեզուի հետ ալ կապ ունին այդ լեզուները, կազմելով քրակալիւիզեւեհայկական խումբ մը, քանի որ հայք իրենց արդի հայրենիքին մէջ հաստատուելէ յառաջ բնակած են նաև Փոխզիտոյ-Իլլիթանիոյ մէջ(\*\*):

Ա. Մէյէրի նոր կարծիքով՝ նորագիւտ տոխարերէնի ու Քեսապոսց լեզուի միջև խնամութիւնը հաստատուելով, անոնց ազգակցութիւնն ալ երևան կ'ելլէ իտալական ու կեղտական լեզուաց հետ. հետևաբար՝ իտալեկեղտական լեզուները խնամութիւն կ'ունենան հայեքնական լեզուներու հետ:

Պարիս Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ

(\*) R. WEILL, ի թերթին Journal Asiatique, 1930, Janvier-Mars:

(\*\*) E. MEYER, Geschichte der Altertums, Ա, Բ, (1909), էջ 613-617:

# ՆՇԽԱՐՔ ՆԱԽՆԵԱՅ

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

### ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ի ՎԵՇՏԱՍԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՍ Ս. ԵՓՐԵՄԻ ՎԱՍՆ ՆԻԿՈՍԻԴԵԱՅ ՔԱՂԱՔԻ

Վեշտասան Ասացուածք Աքրայ Եփրեմի վասն Նիկոմիդիայ քաղաքի վաղ իսկ ի Սիոն Ամազրի, յունրացս 1927-1930 ամաց, հրատարակեցան, որք եւ յանգ ելին յէջ 59 Սիոնի Գ. Տարւոյ (1930):

Ի նմին ձեռնագիր մասենի, զոր կանխաւ ի սկիզբն հրատարակութեան վերասացեալ Ասացուածոց (Սիոն 1927, էջ 314) յիշեցի, անդէն զկնի նոցին զայ այլ ինչ գրուած՝ վերնագրեալ «Ասացուած Առաջին. Վասարն Յանդիսանութեան», որ սկսանի ի քղ. 369Բ վերոյիշեալ ձեռագրին եւ ի գլուխ ելանէ քղ. 385Բ ի ստրեւ իջին. քերականսար, զի ժարուակալութիւնն պակասէ:

Սոյն այս Ասացուած առանց երկմտութեան է երկ Ս. Եփրեմի Աստուոյ, ցարդ անձանօք. իսկ բովանդակութիւնն հառէ զվազափն որ կորեաւ. սակայն չէ՛ յայտ ո՛ր փաղափ:

Հ. Գար. Վ. Զարբանակեան յիւրով «Մատենադարանի Հայկական բարգմանութեանց Նախնեաց» (Վեներեթի 1889, էջ 464-465) վրիպանօք համարեցաւ քէ վերստայ Ասացուած Առաջին վասն Յանդիսանութեան մասն է Վեշտասան Ասացուածոց վասն Նիկոմիդիայ քաղաքին: Բայց սակայն կարծիք այլ, որպէս յառաջագոյն իսկ ի Յունարձանի Միլիարեանց (Վիեննա 1911, էջ 205) ասացի, ակներեւ արդիւնք են իւրիմացութեան:

Վերագոյն հառեալ Ասացուած Առաջին վասն Յանդիսանութեան գրեալ է յերկուց գրուած, որք այլք են քան զգրիչս Վեշտասան Ասացուածոց Վ. Նիկ. Բ.: Ի միոյն գրեալ են առաջին երկոքին էջք եւ երկու սողք իջին երրորդի. իսկ անիսի սկսեալ մինչեւ ցկատարած Ասացուածոյս գրեալ է յայլմէ գրչէ, այլակերպ եւ գունաց քանափաւ: Գիրն է բո-